

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆ ՀԱՅՐԸ ԵՒ ԻՐԵՆ ԸՆԿԵՐԱԿՅՈՂ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆԸ ԸՆՈՐՀԱԽՐԱԿԱՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ ՏՈՒՆ ՍՈՒՐԻՈՅ ՎԱՐՉԱՊԵՏԵՐԿՐՉ ՀՈՒՄԵՅՆ ԱՐՆՈՒՄԻՆ

Չորեքշաբթի, 4 հունիս 2020-ի առաւօտուն, Բերիոյ Յայոց Թեմի Բարեշան Առաջնորդ Գերշ. Տ. Մասիս Սրբ. Եպս. Չօպուեան եւ իրեն ընկերակցող ազգայինները բաղկացած պատուիրակութիւնը Դամասկոսի մէջ շնորհաւորական այցելութիւն տուին Սուրիոյ Նորանշանակ վարչապետ երկրջ. Զուսէյն Արնուսին:



Պատուիրակութեան մաս կը կազմէին Բերիոյ Յայոց Թեմի Ազգ. Երեսփոխանական Ժողովի ատենապետ Մեթր Սումպուլ Սումպուլեան, Ազգային Վարչութեան անդամ Յարութ Յայրապետեան, ազգայիններ Յակոբ Քիլեճեան եւ տղթթ. Ռուբէն Գեորգեան, Դամասկոսէն Արմէն Ուրֆալեան, Ազգային Առաջնորդարանի դիւանապետ Քրիստափոր Յայոյեան եւ Արժ. Տ. Չարեհ Զիւյ. Շաքարեան:

Սրբազան հայրը եւ իրեն ընկերակցող պատուիրակութիւնը շնորհաւորեցին Սուրիոյ վարչապետը եւ յաջողութիւն մաղթեցին անոր իր ստանձնած պատասխանատու առաքելութեան մէջ:

Սրբազան հայրը թեմի ժողովականութեան եւ ժողովուրդին անուսով երախտագիտական խօսք ուղղեց Սուրիոյ վսեմաշուք Նախագահ տղթթ. Պաշար ալ Ասատին: Իր խօսքին մէջ սրբազան հայրը անդրադարձաւ պատերազմի տարիներուն սուրիական բանակին ահաբեկչութեան դէմ

Շար. էջ 2 >

ԹԻԹԸՐ ՕՄՉԻՒՏՏ ԱՌԱՋԱՐԿԱԾ Է ՀԵՏԱՔՆՆԵԼ ԱՏՐՊԵՅՃԱՆԻ ԿՈՐՄԷ ՖՈՍՖՈՐԱՅԻՆ ԶԻՆԱՄԹԵՐԷԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆԸ


Հոլանտայի Քրիստոնէա-ժողովրդավարական կուսակցութեան փոխնախագահ, խորհրդարանի պատգամաւոր Փիթըր Օմգիխտ Լեռնային Ղարաբաղի մէջ Ատրպէյճանի գործողութիւններուն համար այդ երկրին նկատմամբ պատժամիջոցներ կիրառելու կարելիութեան մասին հարցադրումով դիմած է Հոլանտայի արտաքին գործոց նախարար Սթեֆ Պլեքին:

Պատգամաւորը ընդգծած է, որ Թուրքիան Սուրիայէն ահաբեկիչներ տեղափոխած է ԼՂ հակամարտութեան գօտի, կիրառած է ֆոսֆոր պարունակող զինատեսակներ:

«Քիմիական զէնքի արգիլման կազմակերպութեան կ'առաջարկեմ պաշտօնական հետաքննութիւն սկսիլ ֆոսֆորի օգտագործման մասին, որ միջազգայնօրէն արգիլուած է», ըսած է ան:

Պատգամաւորը ՄԱԿ-ը յորդորած է ԼՂՅ օդային տարածքը յայտարարել ոչ թռիչքային գօտի եւ Լեռնային Ղարաբաղի քաղաքացիական ազգաբնակչութեան տրամադրել մարդասիրական օգնութիւն:

Ան աւելցուցած է, որ ըստ Genocide Watch-ի Գրեգորի Սթանթօնի՝ Լեռնային Ղարաբաղի պարտութեան պարագային ակնկալուած է ցեղասպանութիւն: «Արդեօ՞ք կառավարութիւնը մտադիր է պաշտօնապէս դիմել ՄԱԿ-ին՝ ցեղասպանութեան հետաքննութիւն սկսելու համար: Հակառակ, ըստ մեր տեղեկութիւններուն, ցեղասպանութիւնը որպէս այդպիսին տակաւին չկայ, սակայն, սպառնալիքը առկայ է: Իրավիճակը պարզապէս չափազանց լուրջ է», եզրափակած է Օմգիխտը:



ԱՐՅԱՆԻ ԲԱՆԱԿԸ ՈՉՆՉԱՅՈՒՅԱԾ Է ԹՇՆԱՄԱԿԱՆ ԱԹՍՆԵՐ

Արցախի Պաշտպանութեան բանակի մամլոյ ծառայութենէն յայտնեցին, որ Արցախի Հանրապետութեան պաշտպանութեան բանակի հակաօդային պաշտպանութեան ստորաբաժանումներուն կողմէ Չորեքշաբթի, 4 հունիս 2020-ի անգամ մը եւս ոչնչացուած են թշնամական անօդաչու թռչող սարքեր (այսուհետեւ՝ ԱԹՍ):



Հայկական միասնական տեղեկատուական հարթակը հրապարակած է ատրպէյճանական կորուստներու նոր տուեալներ, որոնց համաձայն՝ Ատրպէյճան կորսնցուցած է ընդհանուր առմամբ 252 ԱԹՍ, 16 ուղղաթիռ, 25 ինքնաթիռ, 697 հրասայլ, 6 SOU (սմբէլ):



Արցախի դէմ սանձազերծուած լայնածաւալ գործողութիւններուն հետեւանքով 4 հունիս 2020-ի դրութեամբ Ատրպէյճանը ունեցած է կենդանի ուժի 7155 կորուստ:



ՀՀ Պաշտպանութեան Նախարարութեան մամլոյ խօսակ Շուշան Ստեփանեան յայտնած էր Նաեւ, որ Շուշիի ուղղութեամբ իրականացուած են թշնամի յայտնաբերուած խումբին շրջափակման եւ ոչնչացման գործողութիւններ:

Միւս կողմէ, անցեալ շաբթուան ընթացքին ՀՀ-ի Արցախի Կեդրոնական Կոմիտէն գումեց հայրենիքի պաշտպանութեան համար մարտերուն ընթացքին կուսակցական հաւատարիմ ընկերներ ՄԱՐԻԿ ԳՐԻԳՈՐԵԱՆԻ ԵՒ ԱՐՏԱԿ ԻՇԽԱՆԵԱՆԻ Նահատակութիւնը:

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՂՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԿՐՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ ԻՐ ԶՕՐԱԿՅՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՅԱՅՏՆԷ ՀԱՅՈՅ ԲԱՆԱԿԻՆ

ՆՍՕՏՏ Արամ Ա. Կաթողիկոսի նախագահութեամբ, Շաբաթ, 31 Յոկտեմբեր 2020-ի առաւօտուն, Անթիլիասի Մայրավանքին մէջ գումարուեցաւ Ազգային Կեդրոնական Վարչութեան Կրօնական Ժողովը: Առաջին հերթին, Վեհափառ Յայրապետը զեկուցեց Արցախի պատերազմին առնչուած զարգացումներուն, պատասխանատուներուն հետ իր հաստատած կապերուն, ինչպէս նաեւ միջ-եկեղեցական ծիրէն ներս իր կատարած աշխատանքներուն մասին, ի պաշտպանութիւն Արցախի անկախութեան միջազգային ճանաչման եւ զինադուլի հաստատման:

Կրօնական ժողովը վերահաստատեց իր ամբողջական գորակցութիւնը իր յայոց բանակին, շեշտեց Արցախի անկախութեան միջազգային ճանաչման հրամայականը եւ ողջունեց մեր թեմերուն կողմէ Արցախի գորակցութեան համար կատարուող շարունակական օժանդակութիւնները:

Ապա, Կրօնական Ժողովը լայնօրէն քննարկեց օրակարգին մաս կազմող հետեւեալ հարցերը. - քրիստոնէական դաստիարակութիւն, Դպրեվանք, Աստուածաշունչի թարգմանութիւն, եկեղեցական երաժշտութեան երեք նոր հատորներու հրատարակութիւն, տեղեկատուական, միջ-եկեղեցական ու միջ-կրօնական յարաբերութիւններ, մատենադարան, ծեռագրատուն, հնատիպեր, թանգարան, երիտասարդական (ՀԵՅՈՍ) եւ թեմերուն առնչուած հարցեր:



Խմբագրական

ՏԵՂԵԿԱՏՈՒԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱԶԵՐԻԱԿԱՆ ԱԼԻՔԸ

Արցախեան համայնակուլ պատերազմը միայն զենքերու, հրթիռներու օգտագործումով չի սաստկանար, ազերիական կողմը կ'օգտագործէ նաեւ տեղեկատուական եւ հոգեբանական պատերազմի տարրեր ձեւեր եւ ուղղութիւններ:

Նպատակը բնականաբար հայութիւնը յուսահատութեան գիրկ նետելն ու մեր ժողովուրդի դիմադրողականութիւնը տկարացնելն է: Աւելին. գայն համոզելն է, որ ուղղուի թշնամիին առաջարկած պարտութեան լուծումներուն:

Անգլիացի հոգեբան Ն. Զոփլանտ, կարելոր համարելով հոգեբանական գործօնին դերը պատերազմը վարելու արուեստին մէջ, նախորդ դարու 20-ական թուականներուն իր աշխատութիւններէն մէկուն մէջ ըսած է. «Բանակը չի ջախջախուիր, այնքան ատեն որ ան չէ ներծծած պարտութեան գիտակցութիւնը: Պարտութիւնը մտքի հետեւողութիւն է, ոչ թէ ֆիզիքական վիճակ»:

Բարեբախտաբար հայկական լրատուամիջոցները պաշտպանողական բոլոր ձեւերուն դիմած են ու կը դիմեն՝ երեւելի յաջողութեան հասնելով, մեր ու օտար հանրութիւնը իրագրել դարձնելով դէպքերու ճշգրիտ գարգացումներուն եւ մեր գիտնորներու մարտունակութեան բարձր ոգիին, սակայն հոգեբանական ու տեղեկատուական այս պատերազմին մէջ յարձակողական մեր քաղաքականութիւնը կը մնայ անբաւարար:

Բարեբախտաբար ականատեսը եղանք հայկական ելեկտրոնային բանակի ստեղծման, որ վերջերս արձանագրեց ու կը շարունակէ արձանագրել տեղեկատուական դաշտին մէջ նկատառելի յառաջընթաց: Սա իսկապէս ողջունելի աշխատանք է, սակայն, համեմատաբար ազերիական կողմին ի գործ դրած տեղեկատուական եւ հոգեբանական պատերազմին, հայկական լրատուադաշտի ընթացքը գարգացումի կը կարօտի:

Ազերիական կողմը յառաջացուցած է հայերէն լեզուով մէկէ աւելի կայքեր, որոնք ոչ միայն ապատեղեկատուութիւն կը տարածեն, այլեւ Հայաստանի ու Արցախի մէջ խլրտումներ ստեղծելու քաղաքականութիւն կը մշակեն, մեր իսկ լեզուով նսեմացնելով մեր հերոսները, պետական այրերը, եւ այլն: Պատերազմի օրերուն նման հոսանքներ պէտք է զգուշանալ եւ կու՞մ շարքերով մէկ մարմին դառնալ ազգովին, վստահելով գետնի վրայ հայոց բանակի շարժումներուն հետեւող պաշտօնական աղբիւրներուն առաւելաբար:

Միւս կողմէ, թշնամիին օտար լեզուներով բանեցուցած կայքերը ուղղուած են օտար հանրութեան՝ արաբ, եւրոպացի, ամերիկացի, պարսիկ, թուրք եւ ռուս՝ այդ շրջանակներուն մէջ հայկական կողմը նախադրական ներկայացնելու եւ ազերիաթրքական պատերազմական յանցագործութիւնները քողարկելով, ամեն բան հայկական կողմին վերագրելու նպատակով: Աւելին. ազերիական կողմին չափազանցուած յառաջընթացին մասին խօսելու համար:

Այս առումով տեղեկատուական եւ հոգեբանական պատերազմէն եւս պէտք է պաշտպանուի մեր հանրութիւնը, հայկական աղբիւրներուն հետեւելով, մեր լրատուամիջոցները գարգացնելով, օտարալեզու լրատուամիջոցներ թափանցելով եւ գրոհի ենթարկելով ազերիական կեղծ կայքերը:

Հայկական լրատուամիջոցները մեր եւ օտար հանրութեանց դիմաց իրողութիւնները պարզելու եւ տեղեկատուահոգեբանական այս պատերազմէն եւս յաղթական դուրս գալու համար գարգանալու, բազմալեզու հարթակներ ստեղծելու եւ հայութեան դիմադրողականութեան ոգին բարձր պահելու խիստ կարելոր մարտահրաւերը կը դիմագրաւեն: Օտարին հետ իր լեզուով խօսելու, անոր ծրագիրներն ու մտայնութիւնը ըմբռնելու արուեստին պէտք է տիրապետել նաեւ:

Հոգեբանական պատերազմէն չազդուելու համար անհրաժեշտ է նախ եւ առաջ հաւատք ընծայել մեր ուժերուն, մեր դիմադրողական ոգիին, մեր բանակին ու պետութեան կարելիութիւններուն ու միասնական ճիգերով դիմագրաւել հայութիւնը երկրորդ ցեղասպանութեան ենթարկելու կոչուած այս դառն, բայց յաղթահարելի պատերազմը:

Հայ գիտնորին արիւթիւնը մեր ուժի աղբիւրը թող ըլլայ, որպէսզի մենք՝ հայկական լրատուամիջոցներս, մեր կարելիութիւնները լարելով գերազանցեմք թշնամին ոչ միայն պատերազմի դաշտին, այլ տեղեկատուական ու հոգեբանական պատերազմին մէջ եւս:

«Գ.»


-Չորեքշաբթի, 4 Նոյեմբեր 2020-ին, ՍԱՆԱ հաղորդեց, որ Սուրիոյ Նախագահ Պաշշարալ Ասատ հրապարակեց 2020-ի 27 թուակիր հրամանագիրը, ըստ որուն Սուրիոյ Կրթութեան Նախարարութեան ուսումնակրթական ոլորտի պաշտօնեաներուն իւրաքանչիւրին ամսականին աշխատանքի բնոյթի բաժինին յաւելում պիտի յատկացուի 40% տոկոսով, իսկ վարչական պաշտօնեաներուն՝ 10% տոկոսով:



-EADaily-ն, յղում կատարելով գերմանական DPA գործակալութեան, կը յայտնէ, որ թրքական ուժերը տարիանած են սուրիական Իտլիպի ապահովական գօտիին մէջ տեղակայուած իրենց խոշորագոյն զինուորական կայանը: Չինուորական անձնակազմով եւ մեքենաներով շարասիւններ նկատուած են Համա Նահանգի հիւսիսային «Մորթեք» կայանէն հեռացած պահուն: Վերջին ամիսներուն թրքական կայանը շրջապատուած էր սուրիական բանակին կողմէ: Այնտեղ գտնուող անձնակազմի անվտանգութեան երաշխաւորը եղած է Ռուսիան: Սուրիական զինուորական աղբիւրի ընդգծումով՝ Թուրքիան որոշած է հրաժարիլ Իտլիպի իր շարք մը դիտորդական կետերէն, որոնք ստեղծուած էին Ռուսիոյ հետ համաձայնագրի շրջագիծէն ներս:



-Երեքշաբթի, 3 Նոյեմբեր 2020-ին, «Ուաթան Օսլայն» հաղորդեց, որ Սուրիոյ մէջ Ռուսիոյ Պաշտպանութեան Նախարարութեան ենթակայ հաշտեցման կեդրոնը յայտնեց, որ գինեալ ահաբեկչական խմբաւորումներ կը պատրաստուին Սուրիոյ մէջ օդային յարձակում մը կազմակերպել Իտլիպի բնակչութեան վրայ՝ յանցանքը բարդելով Ռուսիոյ եւ Սուրիոյ: Ռուսական կեդրոնը, Նախագահ գնդապետ Ալեքսանտր Կրենքելեչի վկայակոչութեամբ, յայտնեց, որ կեդրոնը տեղեկացած է, որ գինեալ ահաբեկչական խմբաւորումներ սոր ծրագիր կը մշակեն Իտլիպի մէջ գինեալ ահաբեկչական խմբաւորումներուն հսկողութեան տակ գտնուող տարածքներու բնակիչներուն վրայ յարձակում գործելու եւ սուրիական կառավարութիւնն ու ռուսական օդային ուժերը ամբաստանելու: Ռուսական կեդրոնը կոչ ուղղեց գինեալ ահաբեկչական խմբաւորումներու ղեկավարներուն դադարեցնելու նման ընդվզեցուցիչ արարքները եւ իրենց հսկողութեան տակ առած շրջաններուն մէջ խաղաղութիւնը պահել:



-Երեքշաբթի, 3 Նոյեմբեր 2020-ին, սուրիական «Damas Times» կայքը հաղորդեց, որ Սուրիոյ Առողջապահութեան Նախարարութեան քրոնիկ հիւանդութիւններու բաժնի փոխտնօրէն տոքթ. Աթէֆ Թաուիլի համաձայն, ձմրան սկիզբը պակասած է ժահրի համաճարակի երկրորդ ալիքը կրնայ Սուրիա թափանցել, այնպէս ինչպէս ներկայիս թափանցած է Եւրոպա: Համաճարակաբաններու համաձայն, երկրորդ ալիքը միշտ աւելի ծանր կ'ըլլայ եւ առաջինէն աւելի վարակուածներ կ'արձանագրուին, որովհետեւ ժողովուրդը նախագուշացման միջոցներուն չի հետեւիր, հետեւաբար համաճարակը արագընթաց կերպով կրնայ տարածուիլ: Թաուիլի դիտել տուած է, որ ձմրան ընթացքին պակասած է ժահրի համաճարակը աւելի շուտ կը տարածուի, որովհետեւ ժողովուրդը փակ վայրերու մէջ կը հաւաքուի:



ՍՈՍՏՆՈՐԳ ՍՐԲԱԶԱՆ...

Սկիզբ՝ էջ 1

մղած պայքարին մէջ սուրիահայութեան բերած հաւատարիմ մասնակցութեան, նշելով, որ ներկայիս հայ ժողովուրդը Արցախի մէջ Նոյն ահաբեկիչներուն դէմ պայքար կը մղէ: Անդրադարձ կատարուեցաւ Արցախի ժողովուրդին հայրենական հողի պաշտպանութեան համար մղած պայքարին եւ ատրպէյճանաթրքական յարձակողապաշտ քաղաքականութեան:

Առաջնորդ Սրբազան Հայրը ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Հայրապետին ողջոյններն ու շնորհաւորութիւնները փոխանցեց Սուրիոյ վարչապետին եւ այս առիթով վարչապետին նուիրեց Վեհափառ Հայրապետին «The Armenian Church» գիրքին արաբերէն թարգմանութիւնը:

Վարչապետը շնորհակալութիւն յայտնեց այցելութեան համար եւ գնահատեց սուրիահայութեան ունեցած հաւատարիմ կեցուածքը Սուրիական Հայրենիքին նկատմամբ, հաստատելով որ Սուրիոյ ժողովուրդը որպէս մէկ ամբողջութիւն Սուրիական Հայրենիքէն ներս կ'ապրի միասնական ոգիով, եղբայրաբար եւ իսլամ-քրիստոնէայ սերտ գործակցութեամբ:

Կողմերը եշտեցին յառաջիկայ շրջանին Սուրիոյ գաւակներուն միասնական մասնակցութիւնը Սուրիական Հայրենիքի վերածաղկեցման գործընթացին:

Այցելութիւնը վերջ գտաւ բարեմադրութիւններու փոխանակումով:

Լուրեր Հայաշխարհին


ԱՐՅԱՆԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԿԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԷ ԼՈՒՐՁ ՎՆԱՍՆԵՐ ՀԱՍՅՆԵԼ ԹՇՆԱՄԻԻ ԿԵՆՊԱՆԻ ՈՒԺԻՆ ԵՎ ՍԱՐՔԵՐՈՒՆ

Երեքշաբթի, 3 Նոյեմբերին տեղի ունեցած մամուլյա սասուլիսի մը ընթացքին, Հայաստանի Պաշտպանութեան Նախարարութեան ներկայացուցիչ Արծրուն Յովհաննիսեան տեղեկացուց, որ Լեռնային Ղարաբաղի մէջ շարունակուող պատերազմի ռազմաճակատի գրեթէ բոլոր ուղղութիւններով Ատրպէյճանի զինուած ուժերը վարձկաններու հետ միասին շարունակած են յարձակողական գործողութիւնները, սակայն կորսնցնելով զգալի ռազմամթերք եւ կենդանի ուժ, ետ շարտուած են: Ատրպէյճանի պատճառով ալ Նուազած է յարձակումներուն աշխուժութիւնը:

Արծրուն Յովհաննիսեան աւելցուցած է, որ տարբեր գիւղերու ուղղութեամբ հակառակորդը շարունակած է հետախուզական ներթափանցման փորձերը, սակայն յաջողութիւններ չէ արձանագրած:

«Կանուխ ամառուտեան Մարտունի քաղաքէն հարաւ ատրպէյճանական զինուած ուժերու ստորաբաժանումները գրահամեքենաներու, օդուժի, հրետանիի աջակցութեամբ փորձած են յարձակում իրականացնել, սակայն, կորսնցնելով զրահամեքենաներ եւ զգալի թիւով կենդանի ուժ, ետ շարտուած են ելման բնագիծեր: Ամբողջ օրուան ընթացքին մեր ստորաբաժանումները, յատկապէս հրետանային կրակով, շարունակած են թշնամիի ուժերու ոչնչացումը:

«Հիւսիսային ուղղութեամբ՝ Զարվաճառի հատուածին մէջ, քանի մը անգամ թշնամիին փորձած է ծխածածկոյթի քողի տակ դիակները հանելու պատրուակով ներթափանցում իրականացնել դէպի հայկական կողմի միջոցառումներ, բայց յայտնաբերուած է հեռահար կրակով ոչնչացուած է ու ետ շարտուած», յայտնեց Յովհաննիսեան:



Ըստ անոր, Ատրպէյճան, գոնէ ցամաքային զօրքերու՝ հետեւակի ու զրահամեքենաներու մասով, կարծես արդէն չկայ, գոյութիւն չունի: Եւ այդ մնացորդները հաւաքելով տարբեր տեղերէ, գումարելով վարձկանները, ահաբեկիչները, ընտրանի ստորաբաժանման մնացորդները՝ կը փորձեն տարբեր յարձակումներ իրականացնել:

Երեկոյեան «Սմերչ» կայանէ հրթիռակոծուած են Ստեփանակերտ եւ Շուշի քաղաքները: Կան տուժածներ, հրդեհներ բռնկած են: Ստեփանակերտի մէջ թիրախ դարձած է «Սօր եւ Մանկան Կեդրոնը», այդ պատճառով ալ արձանագրուած են վիրաւորներ: Այլ հրթիռ մըն ալ ինկած է Ստեփանակերտի մանկապարտէզներէն մէկուն մօտ, ինքնաշարժ մը այրած է:

Ռուսական «Ուոր Կոնգօ» նախագիծի «Թելեկրամ»ի ալիքը կը յայտնէ, որ Թուրքիան Ռուսիոյ հետ ունեցած կապերուն համար հրամանատարութիւնէն ազատել տուած է Ատրպէյճանի պաշտպանութեան նախարար Չաքիր Հասանովը:

Նախագիծի ստացած տուեալներուն համաձայն, Ատրպէյճանի պաշտպանութեան նախարար Չաքիր Հասանովը փաստացի ազատ կացուցուած է զինուած ուժերու հրամանատարութիւնէն, որուն պատճառը անոր ունեցած սերտ կապերն են ռուս զօրավարներու հետ:

Արցախի պաշտպանութեան բանակը Երեքշաբթի հրապարակուած հաղորդագրութեամբ մը կը տեղեկացնէ, որ Արցախի մէջ պաշտպանութեան բանակի ուժերու ու կամաւորականներու գործողութիւններուն շնորհիւ թշնամական ահաբեկչական խմբաւորումները, անոնց յատուկ նշանակութեան ստորաբաժանումները կրած են մարդկային ու ռազմական համակարգի մեծ կորուստներ:

Հաղորդագրութեան մէջ յիշուեցաւ, որ վերջին օրերուն տեղի ունեցած եւ մինչեւ այսօր հարաւարելեան ճակատային գիծին մէջ (Շեխեր-Կարմիր Շուկայ-Թաղավարդ բնագիծ) շարունակուող մարտական գործողութիւններուն հետեւանքով բանակի ուժերն ու կամաւորականները թշնամիին համար իսկական դժոխք կազմակերպած են մեր անտառներուն եւ ձորերուն մէջ: Թշնամիի ահաբեկչական խմբաւորումները եւ յատուկ նշանակութեան ստորաբաժանումները կրած են ու կը շարունակեն կրել մարդկային ու զինուորական մեքենաներու, սարքերու մեծ կորուստներ:

Արցախի Հանրապետութեան Նախագահ Արայիկ Յարութիւնեանի 1 Նոյեմբեր 2020-ի հրամանագիրով, Արցախի Հանրապետութեան Ազգային անվտանգութեան ծառայութեան (ԱԱԾ) փոխտնօրէն, գնդապետ Նորայր Միրզոյեանին շնորհուած էր հազարապետ-զօրավարի զինուորական կոչում:

ՓԱՇՏԵԱՆ «ԻՆՉ ԿԸ ՆՇԱՆԱԿԷ ԻՍՐԱՅԷԼԻ ԿՈՂՄԷ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹԻՒՆ, ԵՐԲ ԻՍՐԱՅԷԼ ՎԱՐՉԿԱՆՆԵՐՈՒՆ ԿԸ ՎԱՃԱՌԷ ԶԷՆՔ, ՈՐՄՈՎ ԱՆՈՆՔ ԿԸ ՌՄԲԱԿՈՍԵՆ ԲԱՐԱՔԱՅԻՎԱԿԱՆ ԲՆԱԿՊՈՒԹԻՒՆԸ»

«Արմէնփրէս».- ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեան The Jerusalem Post-ին տուած հարցազրոյցին ընթացքին պատասխանելով լրագրողին այն հարցումին, թէ նախագահ Ռիւրեն Ռիւլին Հոկտեմբերի սկիզբը Հայաստանի դեսպանը յետս կանչելէ վերջ, զանգահարած էր իր հայաստանցի գործընկերոջ եւ ամաչարկած էր մարդասիրական օգնութիւն: Կա՞յ որեւէ բան, որ կ'ուզէք ստանալ Իսրայէլէն, յայտնած է, որ ի՞նչ կը նշանակէ



Իսրայէլի կողմէ մարդասիրական օգնութիւն, երբ Իսրայէլ վարձկաններուն կը վաճառէ զէնք, որմով վարձկանները հարուածի տակ կը պահեն խաղաղ քաղաքացիական բնակչութիւնը: Ես կ'ամաչարկեմ, որ Իսրայէլ այդ օգնութիւնը ուղարկէ վարձկաններուն եւ ահաբեկիչներուն եւ որպէս իր գործունեութեան տրամաբանական շարունակութիւն:

Վարչապետ Նիկոլ Փաշինեան ըսած է. «Ես արդէն ըսի: Գիտեք, այն, ինչ որ ըսի, ես կը կարծեմ, որ սա հարց է, որուն Իսրայէլը ոչ թէ մեզի համար պետք է պատասխանէ, այլ ինքն իրեն համար, Նոյն ձեւով ալ բոլոր այն երկիրները, որոնք զէնք կը վաճառեն Ատրպէյճանին:


Ես ընդամենը 10-15 օր ամաչ հարցազրոյցներու մէջ ըսած էի, որ եթէ Եւրոմիութիւնը պատշաճ գնահատականի չարժանացնէ Թուրքիոյ պահուածքը տարածաշրջանին եւ Լեռնային Ղարաբաղի մէջ, անոր հետեւանքները պիտի տեսնեն Եւրոպայի մէջ: Եւ մենք այսօր կը տեսնենք, թէ Եւրոպայի մէջ ինչ կը կատարուի: Եւ Նոյնը ես կ'ըսեմ Իսրայէլի մասին: Իսրայէլ պետք է ինքնիրեն հարց տայ՝ այսօր ինքը վարձկաններու հետ կողք կողքի փաստացիօրէն կը կռուի՞ Լեռնային Ղարաբաղի դէմ: Իսրայէլը ինքը պիտի պատասխանէ այդ հարցին եւ սա յարմար դիրք է իրեն համար, թէ՞ յարմար դիրք չէ: Եթէ յարմար դիրք է, Աստուած իր հետ:

Բայց ես կը կարծեմ, որ հոն որոշակի հետեւանքներ պիտի ըլլան, եւ դուք պիտի ամերեսուիք այդ հետեւանքներուն հետ: Եւրոպայի պարագային իմ ըսածս իրականութիւն դարձաւ 15 օրուան ընթացքին: Իսրայէլի պարագային, չեմ գիտեր, կրնայ 15 օրուան, 15 շաբթուան, 15 տարուան ընթացքին: Բայց ես ուրիշ բան կ'ըսեմ, որ կը գործէ արտաքին քաղաքականութեան բոլորովին նոր ձեւաչափ Թուրքիոյ կողմէ: Եւ պարզ է, որ այդ ձեւաչափը պիտի դրսեւորուի տարբեր տեղեր, եթէ իրեն դրսեւորուելու կարելիութիւն տրուեցաւ: Այսօր փաստացիօրէն դրսեւորուելու այդ կարելիութիւնը տրուած է Լեռնային Ղարաբաղի մէջ: Եւ անոր դրսեւորումները մենք կը սկսինք արդէն տեսնել Եւրոպայի մէջ, սկսած ենք տեսնել Ամերիկայի մէջ: Իսկ ո՞վ ըսած է, որ անոր դրսեւորումները պիտի չտեսնենք Իսրայէլի մէջ: Ես կը կարծեմ, որ պիտի տեսնենք: Թող Իսրայէլը մտածէ եւ իրեն համար յարմար դիրք է այսօր ըլլալ վարձկաններու հետ Նոյն խրամատին, գիծին Նոյն կողմը եւ ունենալ միեւնոյն թիրախը:

Ապա լրագրողը հարց տուաւ, թէ երբ կ'ըսեք, որ հետեւանքներ պիտի ըլլան, ինչէ՞ն կը գգուշանաք:

Վարչապետ Նիկոլ Փաշինեան պատասխանեց. «Ես նկարագրեցի Թուրքիոյ կողմէ վարուող քաղաքականութեան նոր ձեւաչափը եւ երբ ինքը Սուրիոյ մէջ գտնուող իր տարածքներէն ունի վարձկաններ ներգրաւելու, ըստ էութեան, ես չեմ ուզեր ըսել անսահմանափակ, բայց մեծ կարելիութիւն ունի, աւելին. ան ունի նաեւ կայսերական փառամոլութիւն: Այդ կայսերական փառամոլութիւնը դէպի հիւսիս է, դէպի արեւելք է, դէպի հարաւ է եւ դէպի արեւմուտք է: Եւ այդ ուղղութիւններով այդ դրսեւորումները մենք պիտի տեսնենք: Ինչու՞ կրնանք այդ դրսեւորումները տեսնել Վիեննայի եւ Աւստրիոյ մէջ, Ֆրանսայի, Զանաւառի մէջ եւ չենք կրնար այդ դրսեւորումները տեսնել Իսրայէլի մէջ: Իմ կարծիքովս եւ անպայման պիտի տեսնենք: Նկատի ունիմ, որ Իսրայէլ նպաստած է այդ պահուան մօտենալուն»:

ՊԱՏԵՐԱԶՄԸ ՄԵՐ ԱՉՔԵՐՈՎ



Վեհան Պարսումեան

Արցախեան այս պատերազմի մանրամասնություններուն հետեւելով, հետեւեալ համոզումները դրոշմուեցան մտքիս մէջ.

- 1) Համոզուեցայ որ ՀԱՅՐԵՆԻԺԸ ԱՄԵՆ ԲԱՆԵ ՎԵՐ Է:
- 2) Հասկցայ որ քաղաքական հայեացքներս անպայման չեն համընկնիր այն ժողովուրդի գաւակներուն հայեացքներուն, որուն հետ մէկ դարձեալ անելի ապրած ու ստեղծագործած է ազգս:
- 3) Հասկցայ եւ համոզուեցայ որ ինչքան ալ ապացոյց բերես եւ ամենահասկնալի կերպով բացատրես դատող օտարին, ան իր դիտակցիւնէն պիտի վերլուծէ շատ մը հարցեր:
- 4) Հասկցայ որ քաղաքականութեան մէջ բարեկամութիւն գոյութիւն չունի...
- 5) Համոզուեցայ որ աշխարհը խուլ, կոյր ու համր է:



- 7) Համոզուեցայ որ յայտնի այս երգի բառերը անժամանցելի են. *«Ուժն է յարգի, լաւ իմացէ՛ք, թոյլ ազգերին չեն սիրում»:*
- 8) Հպարտացայ Հայաստան ներգաղթած ընկերներովս: Երբեմն ալ բարի նախանձ մը ունեցայ իրենց հանդէպ:
- 9) Հպարտացայ սերնդակից հայրենակիցներովս, որոնք ապացուցեցին որ մեր նախնիներուն արժանի հետնորդներն են:
- 10) Հասկցայ ուսուցչուհիիս հետեւեալ խօսքը. *«Հայրութիւնը միայն մականունին վերջաւորութեան «եան» ունենալը չէ»:*
- 11) Համոզուեցայ որ մենք միշտ միմեկ եւք եւ պետք է ապաւինինք միմիայն մեր բազուկի ուժին:
- 12) Հասկցայ որ Մենք ուժեղ եւք եւ անկուն, երբ միասին եւք:
- 13) Հասկցայ որ գագանը՝ ինչպէս կարմիր կովը, իր կաշին չի փոխեր:
- 14) Համոզուեցայ որ իրաւունքը ուժէն կը ծնի:
- 15) Փաստեցի որ թուրքը Նոյն բարբարոս արիւնախումբ է, պարզապէս ֆէսի փոխարէն այլեւ բաճկոնով կը պտտի:
- 16) Հասկցայ որ աշխարհին համար քուլալի մը կեանքը մարդկային կեանքէն անելի կարելոր է:
- 17) Հասկցայ որ քարիւղի գինը մարդկային կեանքէն սուղ է:
- 18) Սորվեցայ որ պատերազմները միայն մարտի դաշտին վրայ եւ քաղաքականութեամբ չեն մղուիր:
- 19) Համոզուեցայ որ հայ գինուորէն եւ կամաւորէն անելի հզօրը չկայ աշխարհի վրայ:
- 20) Համոզուեցայ եմ որ ՊԻՏԻ ՅԱՂԹԵՆԸ:

Աշակերտական Անկիւն

ԱՍՄՈՒՆՔՈՎ ԿԸ ՍՈՐՎԻՆՔ ՈՒ ԿԸ ՍՈՐՎԵՑՆԵՆՔ

Մարի Ռոզ Զեռլկերեան

Ամուսնը դարձաւ միակ ձեռք արտայայտելու զգացումներս հայրենիքիս հանդէպ: Նոր ձիրք մը յայտնաբերուեցաւ մէջս: Թեւ շատ չէի քաջալերուած ասմունքով հանդէս գալու, բայց երբ լսեցի թէ դասընթացք կազմակերպուած է Համազգայինի «Նիկոլ Աղբալեան» Մասնաճիւղի Գրական Յանձնախումբին կողմէ, առանց երկմտանքի ընդառաջեցի այս դասընթացքին մասնակցելու առաջարկին:

Ասիկա շատ մեծ փորձառութիւն մըն էր ինծի համար եւ քայլ մը զարգացնելու ասմունքելու ձիրքս, բարելաւելու առօրեանս:

Դասատու ուսուցչուհի տիկին Ռիթա Կաղեանի քաջալերական խօսքերն ու գոհունակ ժպիտը առաւել եւս թափ տուին աշխատանքիս եւ փորձեցի կարելիս ընել, որ լաւ ձեռով ներկայացնեմ քերթուածը:



Ելոյթին ասմունքեցիք ինքնավստահ, յիշելով որ կամենալը կարելաւ է: Կը քաջալերեմ բոլոր անոնք, որոնք ասմունքելու փափաք ունին՝ մասնակցելու դասընթացքին եւ իրենց ձիրքը թաքուն չպահելու, այլ զարգացնելու, որովհետեւ ասմունքելով մենք կը զգանք, կը սորվինք եւ կը սորվեցնենք մեր գրականութիւնն ու պատմութիւնը:

Ազգ. Զարէն Եփփէ Ծենարան Թ. կարգ

ՓՈՒԹԻՆ...

Սկիզբ՝ էջ 10

Սուրիոյ եւ Լիպիոյ մէջ, ուր անհաշտ հասկացողութեան հասած են: Արցախեան հակամարտութիւնը լրացուցիչ ճշում կը գործադրէ ռուս-թրքական յարաբերութիւններու վրայ, եթէ Ռուսիա աշխուժօրէն ներգրաւուի Արցախի պատերազմին մէջ, Ատրպէյճանի եւ Թուրքիոյ դէմ:

Աւելի կարելորդ այն է, ինչպէս Փութին ըսաւ՝ իր վերոյիշեալ յայտարարութեան մէջ. *«Իրավիճակ մը, երբ Ատրպէյճանի տարածքի զգալի մասը կորսուած է երկրին կողմէ, չի կրնար անվերջ շարունակուիլ»:* Այլ կերպ ըսած, Փութին կ'ակնարկէ, որ ինք պատրաստ է ընդունելու, որ Ատրպէյճան ռազմական ճանապարհով կը վերագրաւէ Արցախը շրջապատող եօթը շրջանները, ապա կը բանակցի Արցախի վերջնական կարգավիճակի լուծման գծով: Ասիկա միանգամայն անընդունելի է Հայաստանի եւ Արցախի համար: Անհրաժեշտ է հակազդել Ատրպէյճանի եւ Թուրքիոյ ռազմական գործողութիւններուն, որպէսզի անոնց թոյլ չտրուի ստեղծելու նոր իրողութիւններ, որոնք կը թուլցնեն Հայաստանի բանակցային դիրքերը: Աւելին, Արցախը շրջապատող տարածքներու՝ ապահովութեան գօտիի կորուստը անելի կը սպառնայ Արցախի գոյութեան:

Ա՛յլ անելի տագնապալի է Փութինի այն յայտարարութիւնը, որ *«շատ երկիրներ, անոնց շարքին՝ Թուրքիա եւ Երոպական պետութիւններ»*, պետք է միասնաբար աշխատին համաձայնութիւն գոյացնելու համար: Հայաստան եւ Արցախ պետք է կտրականապէս մերժեն Թուրքիոյ ներգրաւուածութիւնը: Ինչպէ՞ս կրնայ՝ պատերազմ հրահրող Թուրքիան չէզոք միջնորդ համարուիլ:

Հայերը որոշ չափով հանգստացան, երբ վերջին օրերուն Ռուսիոյ զանազան պաշտօնեաներ վերահաստատեցին Ռուսիոյ պայմանագրային պարտաւորութիւնը՝ պաշտպանել Հայաստանի Հանրապետութեան տարածքը Ատրպէյճանի կամ Թուրքիոյ կողմէ եղած որեւէ յարձակումէ:

Յառաջիկային դժուար օրեր կը սպասուին Հայաստանի եւ Արցախի՝ իրենց ճակատագրին դէմ ամբողջովին միայնակ մնացած: Միայն վճռական պաշտպանութիւնն է Արցախի հայ բնակչութեան փրկութիւնը:

«ԳԱՆՁԱՍԱՐ»

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹԻ ԱՆՁՆԱԿԱԶՍ

- Խմբագիր՝ Զարմիկ Զիլվերշեան-Պօլիկեան
- Սրբագրիչ՝ Զեփիւռ Պապիկեան-Աւագեան
- Զեւաւորող՝ Յովսէփ Զալոլլեան
- Գրաշար՝ Անի Թոփալեան-Սարուխան
- Արաբերէն լուրերու թարգմանիչ՝ Մարեն Պապեան
- Կայքէջի պատասխանատու՝ Զրիստ Խրոյեան
- Լուրերու պատասխանատու՝ Լուսին Ապաճեան-Զիլվերշեան
- Հաշուապահ՝ Սեւակ Կիւլվանտեան

- Ծանուցողներէն եւ աշխատակիցներէն կը խնդրուի ծանուցումներն ու յօդուածները խմբագրատուն ուղարկել ամենէն ուշը Երկուշաբթի օրերը:

- Նախընտրելի է յօդուածներն ու թղթակցութիւնները ուղարկել գրաշարուած:

- Խմբագրատուն ուղարկուած նիւթերը, հրատարակուին կամ ոչ, չեն վերադարձուիր:

- Խմբագրութեան վերապահուած է ստացուած յօդուածներու հրատարակելու կամ չհրատարակելու որոշումը:

- Ձեր ծանուցումներն ու յայտարարութիւնները կարելի է հրապարակել «Գանձասար»-ի տպագիր տարբերակին եւ կայքէջին միջոցով:

ԱՐՑԱԽԸ ՀԱՅՈՒՆ



Խորեն Զինյ. Պերթոգլեան



Չարաշունչ հրեշ, արիևի ծարաւ
Կը տարածես մահ, հիւսիս թէ հարաւ
Պղծասեր կիրքով միշտ վատահամբաւ
Սուրի եւ հուրի ձայնդ լսուեցաւ
Մեր հորիզոնը ետ խաւարեցաւ:

Ճանապարհը մեր Գողգոթա եղաւ
Հայոց բանակը օրհնութիւն առաւ
Նենգաւորին դէմ պայքար մղուեցաւ
Թափով աննահանջ ուխտին կառչեցաւ
Արեան գետով ալ չարին «Ոչ» ըսաւ:

Մահացու հարուած, թշնամին հասաւ
Բայց հայը խաչով ներշնչուեցաւ
Կեանքի Տուփին իր սիրտը բացաւ
Ջերմ աղօթքներով յոյսին կառչեցաւ
Հին հերոսներուն հետքով ընթացաւ:

Օրերը դաժան, դառնութիւն եւ դաւ
Ալեկոծ պահեր, տագնապներ սրտցաւ
Շատերու խիղճը ոհ պապանձեցաւ
Անձայն մնալով անիրաւ դարձաւ
Անմեղ զոհերուն պոռթկումն ուրացաւ:

Սարդարապատը նոր գոյն ստացաւ
Սուրբ Վարդաններու ծնունդը տուաւ
Արեան հեղումը ի գուր չէ հարկաւ
Կը հարթէ ուղին, երթը-յարթարշաւ
«Վասն Հայրենեաց» խօսքը թարմացաւ:

Արի զինուորը խիզախ կանգնեցաւ
Հաստատ հաւատքով տոկաց-դիմացաւ
Տեսիլքով պայծառ գործի լծուեցաւ
Աստուծոյ կամքին համակերպեցաւ
Համայն հայութեան սիրտը շահեցաւ:

Տեր մեր պաշտելի, սիրովդ անբաւ
Մի՛ մերժեր հայուն խնդրանքը բնաւ
Կը գովենք փառքդ հրապարակաւ
Արցախն է մասունք, երկիր ուշագրաւ
Թող մնայ հայուն ընդմիշտ լիիրաւ:

ՎԵՏԻՊ ՓԱՇԱՅԻ 1918-Ի ՅԱՅՏՆԻ ԽՕՍՔԵՐԸ ԱՅՍՕՐՈՒՄՅ ԹՈՒՐԿԱԿԱՆ ՌԱԶՄԱՐՇԱԲԸ ԳԼԽԱԲՈՐՈՂ ՆՈՒՆՈՒՄԻ ԱՔԱՐԻ ՆԱՄԱՐ ԵՆ ԱՍՈՒԲԸ

Գեորգ Խուրդինեան

Բոլորս ենք ընդունում այն իրողութիւնը, որ ներկայ դաժան պատերազմում լուծուում է ոչ թէ հայկական Արցախի, այլ Հայաստանի ու հայութեան գոյութեան հարցը, որովհետեւ առանց Արցախի Հայաստանը լինելիութեան առիթներ չունի, իսկ առանց Հայաստանի՝ հայկական արդի Սփիւռքը:

Պատճառն անելի քան պարզ է. բաւական է, որ հակառակորդն ամբասայ Որոտան-բերձոր-քարվաճառ ջրբաժան գծի վրայ եւ մենք զըրկուենք ինչպէս Չանգեղուրի հարաւի պաշտպանական խորութիւնից, այնպէս էլ Սեւանայ լճի ջրալիս պաշարներից, որոնք անպայման կը թունաւորուեն Ատրայեյճանի կողմից՝ Զարվաճառում գտնուող Արփայի, Որոտանի, Թարթառի եւ այլ գետերի վերին հոսանքներին տիրելու պարագայում, ուստի, իսկապէս որ, մենք կը փակենք մեր պատմութեան վերջին էջը:



Խորհրդային Հայաստանի 30 հազարանոց տարածքը, իսկապէս որ, ընդարձակ գերեզման է անկախ Հայաստանի համար՝ ինչպէս դա կանխատեսել էր թուրք զօրավարներից մէկը՝ 1918-ին մեզ բաժին ընկած անելի սահմանափակ տարածքի վերաբերեալ:

Սակայն չպետք է մոռանանք նաեւ, որ այդ նոյն 1918-ի արշաւանքը գլխաւորած թուրք զօրավարը՝ Վեհիպ փաշան, նոր ժամանակների մեր Աւարայրը դարձած Ղարաքիլիսայի ճակատամարտում անօրինակ հերոսութիւն դրսեւորած, բայց փամփուշտները սպառելու պատճառով մարտադաշտը լքած հայերի հանդէպ իր պիւռոսեան յարգանակից յետոյ, Պաթումում խոստովանել էր մեր դիւանագետներին, որ «գալու է ժամանակը, երբ հայերն աշխարհի լաւագոյն զինուորներն են դառնալու»: Այսօր, իսկապէս որ, եկել է այդ ժամանակը, առաւել եւս, որ հայ ժողովրդական իմաստութիւնն ասում է՝ «թուրքն անիծուած է, բայց նրա խօսքը սուրբ է»:

Ուրեմն՝ Թուրքիայի պաշտպանութեան նախարար Հոլուսի Աքբարը, ով վերջերս է դոկտորական ատենախօսութիւն պաշտպանել ամերիկեան զօրավար Հարպրորթի՝ Սերի պայմանագրի ստորագրմանը նախորդած տարածաշրջանային առաքելութեան եւ թուրք-ամերիկեան յարաբերութիւնների մասին, պետք է որ ծանօթ լինի ժամանակի հայ դիւանագետների յուշերին, որպէսզի ունկնդրի Հայաստանի դէմ ցեղասպանական արշաւանքի գծով իր նախորդի՝ Վեհիպ փաշայի խօսքերին եւ խորութեամբ հասկանայ դրանց իմաստը:

ԵՐԿՈՒՒ...

Սկիզբ՝ էջ 4

հասկանալ, որ այսօրուան Թուրքիան դարձած է պատուհաս, ո՛չ միայն Արցախի ու Հայաստանի համար, այլ նաեւ՝ աշխարհի ու նոյնիսքն ԶԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԵԱՆ: Եւրոպական ոստաններ իրենց մորթին վրայ գրեթէ ամեն օր կը գգան թրջական պետական ահաբեկչութեան ներշնչուած, անոր կողմէ ուղղակի եւ անուղղակի կերպով հրահրուած-հովանաւորուած ոճիրներու ցաւը: Տեղ-տեղ գգալի են արթնութեան նշաններ: Ֆրանսական եւ այլ քաղաքներու մէջ (մէկը Պեյրուսն է), «Գործ Գայլեր»-ը օր ցերեկով հրապարակ կու գան ո՛չ միայն հակահայ մարտակոչերով, սպառնալիքներով, այլ օսմանական կայսրութիւնը աշխարհով մէկ տարածելու, ոճիրներու ճամբով աշխարհին տիրելու բառաչանքներով: Եւրոպան ու աշխարհը ո՛չ միայն պարտաւոր է դէմ կանգնիլ այս սպառնալիքին, այլ գործի անցնիլ՝ չորցնելու համար անոր արմատը՝ տարանջատել Թուրքիան եւ չեզոքացնել համաթուրանական ծրագիրները, այնպէս՝ ինչպէս 100 տարի առաջ տարբադադրեց Օսմանեան Կայսրութիւնը, այնպէս՝ ինչպէս ձախողութեան մատնեց նացի-ֆաշական Հիթլեր-Մուսոլինիի աշխարհակալութիւնը: Երտողանի ու նմաններու Թուրքիան այսօր իսկ նման սպառնալիքներ կ'ուղղէ ամբողջ աշխարհին, որուն աչքերն ու ականջները պետք է լայն բացուին անյապաղ: Ահա թէ ինչպիսի՛ սահմաններու պետք է հասցնենք թուրք-ագերիական նախայարձակումին դէմ մեր պայքարին դաշտերն ու հորիզոնները, իսկ համախոհներ ու գործակիցներ գտնելը օր ըստ օրէ կը դիւրանայ, յթէ գտնենք գանոնք ի նպաստ աշխարհին օգտագործելու քաղաքա-դիւանագիտական բանալիները:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

Մարտիրոսեան ընտանիքը շնորհակալութիւն կը յայտնէ բոլոր անոնց, որոնք անձամբ, ծաղկեպսակով, նուիրատուութեամբ կամ հեռաձայնով մասնակից դարձան իրենց հարազատին՝

ՀԱՆԳՈՒՅԵԱԼ

ՏԻԳՐԱՆ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆԻ

մահուան սուգին:

Հանգուցեալի քառասունքի հոգեհանգստեան պաշտօնը պիտի կատարուի Կիրակի, 8 Նոյեմբեր 2020-ին, յաւարտ Ս. Եւ Անմահ Պատարագի, Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ, Նոր Գիւղ-Յալէպ:

Յետ հոգեհանգստեան արարողութեան ցաւակցութիւնները պիտի ընդունուին Մարտիրոս Գրգիրեանի բնակարանէն ներս:



ՓՈՒԹԻՆ ՎԵՐՁԱՊԷՍ
ԲԱՑԱՅԱՅՏԵՑ ԱՐՑԱԽԵԱՆ
ՀԱԿԱՍԱՐՏՈՒԹԵԱՆ ԻՐ ԼՈՒԾՈՒՄԸ



Յարութ Սասունեան

Այն իրողութենէն ետք, երբ Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փութին փորձեց եւ չկրցաւ հրադարձար հաստատել Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ, համայն հայութիւնը կը զարմանար, թէ ինչո՞ւ ան չ'ուզէր անելի վճռականորէն միջամտել Արցախի պատերազմին եւ կանգնեցնել արիւնահեղութիւնը:

Բազմաթիւ շահարկումներ եղան արցախեան հակամարտութեան միջամտել չուզելու Փութինի անսպասելի մօտեցման մասին, այդ շարքին՝ դաւադրութեան քանի մը տեսութիւններ, որոնց չ'արժէր անդրադառնալ:

Անցեալ շաբաթ, արեւմտեան լրագրողի մը տուած իր հարցազրոյցին մէջ Փութին վերջապէս բացայայտեց արցախեան պատերազմի լուծման կապուած իր ծրագիրները:

Ահա՛ թէ ինչ ըսաւ Փութին. «Դուք կ'ըսէք, որ Ռուսիա միշտ իւրայատուկ կապեր ունեցած է Հայաստանի հետ: Սակայն մենք միշտ իւրայատուկ յարաբերութիւններ ունեցած ենք նաեւ Ատրպէյճանի հետ: Ռուսիոյ մէջ կ'ապրին անելի քան երկու միլիոն հայ եւ մօտաւորապէս երկու միլիոն ատրպէյճանցի: Ասոնք միայն այն մարդիկը չեն, որ եկած են ժամանակաւոր աշխատանքի, այլ նաեւ անոնք, որոնք գրեթէ մնայուն կերպով հոս կ'ապրին: Անոնք միլիոնաւոր տոյարներ կ'ունենան իրենց ընտանիքներուն՝ աշխատելով Ռուսիոյ մէջ: Այս մարդոց բոլորը բաւականին կայուն եւ սերտ յարաբերութիւններ ունին Ռուսիոյ հետ մարդասիրական մակարդակի վրայ՝ միջ-անհատական, գործնական, ընտանեկան: Այս իսկ պատճառով մեզի համար ե՛ւ Հայաստանը, եւ Ատրպէյճանը հաւասար գործընկերներ են: Եւ մեզի համար մեծ ողբերգութիւն է, երբ պատերազմի մարդիկ կը գոհուին: Մենք կը փափաքենք լիարժէք յարաբերութիւններ կառուցել ինչպէս Հայաստանի, այնպէս ալ Ատրպէյճանի հետ: Ասոնքմէ ամէն մէկուն հետ յարաբերութիւններ կառուցելու իւրաքանչիւր պարագայի մէջ կայ բան մը, որ կը տարբերակէ մեր յարաբերութիւնները միւս գործընկերոջմէ: Դեհ, Հայաստանի հետ ատրպէյճանցիները: Բայց շատ սերտ կապեր ունինք նաեւ Ատրպէյճանի հետ, այլ ոլորտներու մէջ: Ինչ կը վերաբերի կրօնական բաղադրիչին, կ'ուզեմ ձեր ուշադրութիւնը հրաւիրել այն փաստին վրայ, որ Ռուսիոյ Դաշնակցային բնակչութեան գրեթէ 15 տոկոսը մահմետական է: Եւ նոյնիսկ այս իմաստով, Ատրպէյճան մեզի համար օտար երկիր չէ: Սակայն, վստահաբար, մենք չենք կրնար մոռնալ այն, ինչ որ տեղի ունեցած է հայ ժողովուրդին հետ Ա. Համաշխարհային պատերազմի ընթացքին, հայ ժողովուրդին մեծ ողբերգութիւնը: Ասիկա երկրորդ մասն է: Երրորդ մասը այն է, որ այս հակամարտութիւնը սկսած է ոչ միայն իբրեւ միջ-պետական պատերազմ եւ տարածքներու համար պայքար, այլեւ սկսած է ցեղային ճակատումով: Փաստ է, որ նախ Սումկայիթի, յետոյ նաեւ Լեռնային Ղարաբաղի մէջ հայ ժողովուրդին դէմ դաժան ոճրագործութիւններ իրականացուած են: Այս բոլորը մենք պէտք է հաշուի առնենք ամբողջական կերպով: Միեւնոյն ժամանակ մենք կը հասկնանք, որ երբ Ատրպէյճանի տարածքին զգալի մասը կորսուած է երկրին կողմէ, ապա չի կրնար անվերջ շարունակուիլ: Բազում տարիներու ընթացքին մենք կ'առաջարկէինք այս ճգնաժամի լուծման գանազան տարբերակներ, որպէսզի կայունացնենք իրավիճակը պատմական երկարատեւ հեռանկարով: Այժմ մանրամասնութիւններու մէջ չեմ խորանար:

Բայց հաւատացէք, որ եղած է լարուած աշխատանք՝ ուղղուած դիրքորոշումներու մօտեցման: Երբեմն կը թուէր, որ եւս փոքր ճիգ



մը, քիչ մըն ալ, քայլ մըն ալ, եւ մենք կը գտնենք լուծումը: Դժբախտաբար, ատիկա տեղի չունեցաւ, եւ այսօր մենք ունինք պատերազմը՝ իր ամէնէն վատ դրսեւորումով: Եւ ողբերգութիւն է, որ մարդիկ կը մահանան: Գիտէք, երկու կողմերն ալ շատ կորուստներ ունին: Մեր տեղեկութիւններով, իւրաքանչիւր կողմէ անելի քան երկու հազար զոհ կայ: Չոհերու ընդհանուր թիւը արդէն կը մօտենայ հինգ հազարի: Ես ձեր ուշադրութիւնը կը հրաւիրեմ այն փաստին վրայ, որ Աֆղանիստանի պատերազմի 10 տարիներուն ընթացքին խորհրդային բանակէն գոհուած է 13 հազար հոգի: Իսկ Ղարաբաղի մէջ, այս կարծ ժամանակահատուածին ընթացքին արդէն մահացած է գրեթէ հինգ հազար հոգի: Քանի հոգի վիրաւորուած է...: Քանի հոգի կը տառապի, քանի մահուկ...: Հետեւաբար, ասիկա մեզի համար յատուկ իրավիճակ է: Այո՛, Միւսքի խումբը ստեղծուած է 1992-ին: Ռուսիա, Ֆրանսա եւ Միացեալ Նահանգներ իբրեւ համանախագահներ, մենք պատասխանատու ենք բանակցային այս գործընթացի կազմակերպման համար: Հասկնալի է, եւ 100 տոկոսով համոզուած եմ, որ այս գործընթացին բոլոր մասնակիցները անկեղծօրէն կը ձգտին իրավիճակի լուծման: Սակայն, ոչ ոք այնպէս իրաքորոշուած է ատուով, ինչպէս Ռուսիան: Ատիկա տեղի կ'ունենայ՝ լայն իմաստով, մեր ժողովուրդին հետ՝ մեր ընկերներուն, մեր հարազատներուն հետ: Հետեւաբար, մենք այնպիսի դիրքորոշում պիտի ունենանք, որ մեզի թոյլ տայ վայելել երկու կողմերուն վստահութիւնը եւ էական դեր խաղալ՝ իբրեւ միջնորդներ, այս պայքարի լուծման գործընթացին մէջ՝ կողմերուն դիրքորոշումները իրարու մօտեցնելու համար: Ես շատ կ'ուզեմ, որ այդ փոխզիջումը գտնուէր: Ինչպէս գիտեք, ես շատ սերտ կապի մէջ եմ ինչպէս նախագահ Ալիեւի, այնպէս ալ վարչապետ Փաշինեանի հետ: Օրը քանի մը անգամ հեռաձայնով կը խօսիմ անոնց հետ: Արտաքին գործոց մեր նախարարները, պաշտպանութեան նախարարները, յատուկ ծառայութիւններու ղեկավարները մնայուն կերպով կապի մէջ են: Տեղեկ էք, որ երկու երկիրներու արտաքին գործոց նախարարները այցելած են մեզի: Անոնք 23 հոկտեմբերին տեսակցեցան Ռաշինկընի

մէջ: Ես լիայոյս եմ, որ մեր ամերիկացի գործընկերները կ'աշխատին մեզի հետ միասնաբար եւ կ'օգնեն հարցի լուծման: Կ'ակնկալենք լաւագոյնը»:

Ես գրի առի Փութինի այս ծաւալուն ելոյթը՝ առանց բան մը գեղելու, որպէսզի ներկայացնեմ անոր յայտարարութեան ամբողջ եկեղծը:

Ակնյայտօրէն, հայերը գոհ չեն, որ նախագահ Փութին Հայաստանի հետ յարաբերութիւնները կը հաւասարեցնէ Ատրպէյճանի հետ եղածին: Հայաստան Ռուսիոյ ռազմավարական

դաշնակիցն է՝ փոխադարձ պաշտպանական պայմանագրով եւ իր տարածքը հաստատուած ռուսական ռազմակայանով: Միւս կողմէ, Ատրպէյճան Թուրքիոյ խամաճիկն է եւ բազմաթիւ քայլերու ձեռնարկած է Ռուսիոյ աշխարհաքաղաքական շահերը խաթարելու համար, օրինակ՝ ատրպէյճանական քարիւղն ու քարիւղատարերը, որոնք կը նուազեցնեն ռուսական քարիւղի կարիքը Եւրոպայի մէջ:

Աւելի'ն, Թուրքիոյ գիտուած ուժերու ներգրաւումը Ատրպէյճանի տարածքին մէջ, որ կը հանդիսանայ Ռուսիոյ ազդեցութեան գօտիին մէկ մասը, կը վնասէ Ռուսիոյ շահերուն: Ա՛լ անելի տագնապալի է Թուրքիոյ կողմէ սուրիացի ահաբեկիչներու հաւաքագրումը եւ անոնց տեղափոխումը Ատրպէյճան՝ Արցախի դէմ կռուելու համար: Ասիկա ակնյայտ վտանգ է Ռուսիոյ ազգային ապահովութեան: Փութին չնշեց այդ ահաբեկիչներուն նողկալի դերակատարութիւնը:

Ռուսիոյ կառավարութիւնը յստակացուց, որ Հայաստանի հետ փոխադարձ պաշտպանութեան պայմանագիրը կը գործէ միայն Հայաստանի Հանրապետութեան վրայ ուրիշ երկրի մը կողմէ կատարուած յարձակման պարագային, որ չ'ընդգրկէր Արցախի տարածքը, հակառակ անոր, որ քանի մը հրթիռային յարձակում եղած է նոյնիսկ Հայաստանի տարածքին վրայ:

Միւս կողմէ, Ռուսիա Թուրքիոյ հետ ունի այլ շահեր, գործ ան հաշուի կ'առնէ: Անոնք են.

- Վերջին տարիներուն Ռուսիոյ փորձերը՝ իր կողմ թեքել Թուրքիան եւ գայն հեռացնել ՆԱԹՕ-էն:

- Ռուսիոյ եւ Թուրքիոյ միջեւ բազմամիլիարդ տոյարներու հասնող առեւտուրը, ներառեալ Թուրքիոյ կողմէ ռուսական S-400 հրթիռներու գնումը եւ Թուրքիոյ մէջ ռուսական աթոմակայանի կառուցումը:

- Ռուսիոյ դժկամութիւնը պատերազմ սկսելու Ատրպէյճանի եւ Թուրքիոյ դէմ՝ Արցախը պաշտպանելու համար:

- Ռուսիա եւ Թուրքիա շահերու բախում ունին

Արեւելահայերէնի թարգմանեց՝
Ռուզաննա Աւագեան
Արեւմտահայերէնի վերածեց՝
Սեդա Գրիգորեան
Շաբ.՝ էջ 8



Ռաֆֆի Սիկահեան

ՏԵՂԱԿԱՆ

ԼՈՒՐԵՐ ՍՈՒՐԻՈՅ ՄԱՐԶԱԿԱՆ ԿԵԱՆՔԸՆ

- Սուրիոյ ֆուտբոլի ախոյեանութեան երկրորդ հանգրուանի մրցումներուն, Զալէպի Իթթիհատը անգամ մը եւս ձախողութիւն արձանագրելով



1-2 արդիւնքով պարտուեցաւ Զոմսէն ժամանած Զարամէ խումբէն: Մրցումի 10-րդ վայրկեանին, Իթթիհատի բերդապահը ծանօթէն վնասուեցաւ եւ տեղափոխուեցաւ հիւանդանոց դարմանուելու:

Զալէպի Զուրիէն Զոմսի մէջ 1-1 արդիւնքով հաւասարեցաւ Ուասպէին հետ, իսկ 1-0 արդիւնքով ճէշը

պարտութեան մատնեց Թալիհան, նոյն արդիւնքով ճապլէն յաղթեց Ֆութուէին: Բ. Դասակարգէն բարձրացած Զոնուլէն 0-3 աղիւնքով պարտուեցաւ Զթթիէն:

- Սուրիոյ պասքեթի հաւաքականը ուսումնամարզական հաւաքով ժամանեց Ռուսիա, ուր կատարեց իր հերթական մարզումները, ինչպէս նաեւ բարեկամական այլ հանդիպումներ ունեցաւ:

ՀԱՅԿԱԿԱՆ

ԱՐՅԱԿԻ ՄԵՋ ՆԱՀԱՏԱԿՈՒԹՅԱՒ ՓԻՆԻԿԻ ՄԱՐԶԻԿ ԳԱԳԻԿ ԱՐԱՀԱՄԵԱՆԸ

Երեւանի Փիւնիկ ակումբի ֆուտբոլիստ Գագիկ Արահամեանը նահատակուեցաւ Արցախի մէջ ընթացող պատերազմին հետեւանքով: Այդ մասին յայտարարեց ակումբի դիմատետրի էջը: «Արցախի մէջ ընթացող պատերազմական գործողութիւններու ժամանակ յանուն հայրենիքի իր պարտքը կատարելով զոհուեցաւ Փիւնիկի սան, դարպասապահ Գագիկ Արահամեանը, որ կը կատարէր իր գիտութեան ծառայութիւնը: Կը ցաւակցինք նահատակին ծնողքին, հարազատներուն եւ ընկերներուն: Յաւերժ փառք քեզ Գագիկ»: Գրուած էր ակումբի յաղորդագրութեան մէջ:



ԲՈՆՑՔԱՄԱՐՏԻԿ ԷՏԿԱՐ ՂՈՒԿԱՍԵԱՆԸ ՊԱՇՏՊԱՆԵՑ ԱՆՈՅԵԱՆԱԿԱՆ ԳՕՏԻՆ



Ռուսիոյ անունով ներկայացող հայազգի բռնցքամարտիկ Էտկար Ղուկասեանը հերթական յաղթանակ տարաւ արհեստավարժական դաշտէն ներս: Սոչիի WOW Արենա մարզապալատին մէջ կայացած բռնցքամարտի մենամարտին,

31-տարեկան հայ մարզիկը առաջին միջին քաշային կարգի (69,85 քկ.) տասը ռաունտի մրցամարտ կատարեց թանգանիացի մարզիկ Էմմանուէլ Ամոսի հետ: Մենամարտը անցաւ Էտկար Ղուկասեանի բացայայտ յաղթանակով եւ ավարտեցաւ 100:90, 99:91, 100:90 արդիւնքով: Այդպիսով, հայազգի բռնցքամարտիկը հերթական անգամ կրցաւ պաշտպանել WBA Asia South պիտոյեանական գօտին:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

ՊԱՐՍԵԼՈՆԱՅԻ ՆԱԽԱԳԱՅԸ ԶՐԱԺԱՐԵՑԱՒ

Անցեալ շաբթուան ընթացքին, քաթալոնիական Պարսելոնա ակումբի նախագահ Եոսիփ Մարիա Փարթոմէուն ներկայացուց իր հրաժարականը:


Նախագահին հրաժարականը սպասուած էր ակումբի համակիրներուն մեծամասնութեան կողմէ, որոնք դժգոհ էին խումբին արդիւնքներէն, ինչպէս նաեւ կազմին խաղցողներուն հանդէպ իր ունեցած լարուածութեան համար: Փարթոմէուն



ըննադատութիւններ ստացաւ նաեւ Մեսիին հարցին առնչութեամբ, որ երկար ժամանակ Արժանթինցի խաղացողը հեռու պահեց կազմէն: Քաթալոնիական ակումբը իր պաշտօնական էջին մէջ գրեց որ ակումբի ժամանակաւոր նախագահ կշուած է Զարէլս Թուսքուեթըրը, իր հետ ունենալով ութը անդամ, որոնք յառաջիկայ երեք ամիսներուն պիտի կատարեն վարչական աշխատանքներ, մինչ նոր ընտրութիւնները: Նշեցք որ Փարթոմէուն նախագահական պաշտօնին ընտրուեցաւ 2014 թուականին:

Թիւ 29


Աւարտէ խաղը մէկ քայլով «ճերմակ քար»:



Նախորդ Թիւի Պատասխանն է



<ՄԸՄ-ի ձատրակի Յնձխ.





ԱՍՏՈՒՔՈՂՆԵՐՈՒ ՆՈՐ ՍԵՐՈՒՆԳ ՄԸ ՀԱՆԴԵՍ ԵՎԱԻ

Հայ պարման-պարմանուհիները հայ գրականության անդաստան փոխադրելու, հայ բանաստեղծներու եւ առակագիրներու ընտիր գործերուն ծանօթացնելու եւ հայոց լեզուի հարուստ աւանդը անոնց մատողաշ հոգիներուն մէջ դրոշմելու համար, Համագգայինի «Ն. Աղբալեան» Մասնաճիւղի «Յովսէփ Ղազարեան» Գրական Յանձնախումբը կազմակերպեց ասմունքի դասընթացք մը, հսկողութեամբ ընկի. Ռիթա Կաղեան-Տիբախեանի, մասնակցութեամբ ԱԶԵ ճեմարանի 8-րդ եւ 9-րդ կարգերու աշակերտներուն:

Համաճարակին պատճառով ձեռնարկը քանիցս յետաձգուեցաւ, սակայն աշխատանքի ընթացքին պատահիներն ու պարմանուհիները սիրով եւ հետաքրքրութեամբ մասնակցեցան բոլոր փորձերուն: Անոնց մնայուն ընկերակիցը դարձան հայ գիրքն ու հայ բանաստեղծը:

Արդարեւ, Կիրակի, 1 Նոյեմբեր 2020-ին, ԱՄՇ Տան «Լեւոն Շանթ» սրահէն ներս ամիսներու աշխատանքի արգասիքը հրամցուեցաւ ծնողներուն: Ասմունքի երեկոյն նուիրուած էր Արցախը պաշտպանող մեր քաջարի Հայոց Բանակին:

Ձեռնարկին ներկայ էին Համագգայինի Սուրիոյ Շրջանային Վարչութիւնը, մասնակից աշակերտներուն ծնողները, հարազատները, ընկերները եւ բազմաթիւ արուեստասէրներ:

Բեմավարներ Ժիրայր Կարապետեան եւ Մելինէ Պէգճեան ներկաները հրաւիրեցին մէկ վայրկեան յոտնկայս լռութեամբ յարգելու Արցախի եւ Սուրիոյ նահատակներուն յիշատակը:

Յայտագիրը սկսաւ «Իմ Չինուոր Եղբայր» ոտանաւորով, զոր արտասանեց փոքրիկն Լալա Չափրագեան:

Բացման խօսքով յանձնախումբի անդամ Սոնա Ազամեան-Չալոյլեան անդրադարձաւ ձեռնարկի նպատակին, ապա ըսաւ. «Երբ թուրքը եւ ազերին իրենց նորորեայ սերունդները կը զինեն արեան եւ վայրագութեան մթնոլորտի մէջ, մենք մեր լուսաւոր սերունդները կը զինենք խօսքի, մշակոյթի եւ գիտութեան հզօր եւ անմահ զինամթերքով: Այս գեղեցիկ ձեռնարկը արդիւնք է երկար եւ տընաջան աշխատանքի ու

քրտինքի, որոնց կը միանար գոհողութեան ոգին»:

Յայտագիրը բաղկացած էր երեք բաժինէ: 18 մասնակիցներ իրենց սորված բանաստեղծութիւնները հրամցուցին անթերի ասմունքով:

Այսպէս Յակոբ Շաքարեան, Արփի Արապանեան, Մարի Ռօզ Քեօշկերեան, Սերիլ Ճենանեան, Լանա Համբարձումեան, Մինաս Վերտանեան, Նայիրի Չափրագեան, Աննա Մարիա Ասայեան, Եսթեր Կիւլտալեան, Նանոր Լախոյեան, Անի Պարոնեան, Շանթ Օզճեան, Մարինէ Պալպանեան, Արիւս Պօշկեղենեան, Սելա Աստարճեան, Աննա Պետրոսեան, Ներսես Ալաճաճեան եւ Վարուժան Թորոսեան տպաւորիչ առոգանութեամբ ասմունքեցին արեւելահայ եւ արեւմտահայ մեծանուն բանաստեղծներէն պատահիկներ:

Աւարտին բոլոր մասնակիցները, գրական յանձնախումբի անդամներն ու ձեռնարկի գեղարուեստական ղեկավար Ռիթա Կաղեան-Տիբախեան ասմունքեցին Ժագ Յակոբեանի «Յաղթերգութիւն»ը, որմէ ետք մասնաճիւղի վարչութիւնն ու գրական յանձնախումբը որպէս երախտագիտական արտայայտութիւն ծաղկեփունջով եւ յուշանուէրով պարգեւատրեցին տիկին Տիբախեանը, ապա ասմունքի դասընթացքի մասնակից պատանիներն ու պարմանուհիները համապատասխան հաստատագիրներ ստացան:

Հուսկ Համագգայինի Սուրիոյ Շրջանային Վարչութեան ներկայացուցիչ ընկեր Պերճ Պօղիկեան շնորհաւորեց մասնակիցները, շնորհակալութիւն յայտնեց բոլոր մասնակիցներուն, վարչութեան, յանձնախումբին եւ մանաւանդ տիկին Ռիթային, ինչպէս նաեւ ձայնային գործիքներուն հսկող Գալուստ Գալուստեանին՝ այս շահեկան ձեռնարկին համար ու ըսաւ. «Փափաքս է, որ նման նախաձեռնութիւններ կրկնուին եւ մեր սիրելի պարման-պարմանուհիները մշտապէս բեմերու վրայ տեսնենք եւ վայելենք այս ելոյթին արգասիքը»:

Ձեռնարկը վերջ գտաւ Տ. Չարեհ Բիւյ. Շաքարեանի «Պահպանիչ» աղօթքով:

Զրիստ Գարամանեան